



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Բ Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն  
Կ Ե Ն Տ Բ Ո Ն Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի Խ Ո Ր Հ ՈՒ Բ Գ**

**Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Բ Ջ Ա Բ Ա Ն ՈՒ Մ**

16.02.2005 թ.

թիվ 1

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ  
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԳԻ ՍԱՍԻՆ ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով՝ հրապարակայնություն ապահովելու նպատակով ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին ավանդատուին գրավոր տեղեկացնելու, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի պարտականության վերաբերյալ ավանդատուին ծանուցում տրամադրելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

**Պ ա ր զ ա ք ա ն ու մ է.**

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ծանուցումը բանկերը պետք է տրամադրեն սկսած ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի՝ Օրենքով սահմանված կարգով ստեղծման պահից և պարտադիր հանձնեն բոլոր նոր այն ավանդատուներին, որոնց բանկային ավանդի պայմանագրի ժամկետը լրանալու է ոչ շուտ, քան 2005 թվականի հուլիսի 1-ը կամ անժամկետ (ցպահանջ) է: Ծանուցումը նշված ավանդատուներին հանձնվում է նրանց հետ ավանդի վերաբերյալ գործարքը կնքելու պահին: Բանկերը կարող են գրավոր ծանուցման համար Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով պահանջվող դրույթները պատշաճ կերպով արտացոլել ավանդատուի հետ կնքվող համապատասխան պայմանագրում: Ընդ որում, պայմանագրի՝ բանկում և ավանդատուի մոտ մնացող օրինակների վրա պետք է հստակ երևա, որ ավանդատուն ծանոթացել է ծանուցմանը վերաբերող դրույթներին:

Միևնույն ժամանակ, սկսած ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի ստեղծման պահից՝ բանկերը պարտավոր են Օրենքով սահմանված կարգով նշված ծանուցումն անմիջապես տրամադրել յուրաքանչյուր առկա այն ավանդատուներին:

ա) որոնց բանկային ավանդի պայմանագրի ժամկետը լրանալու է ոչ շուտ, քան 2005 թվականի հուլիսի 1-ը կամ անժամկետ (ցպահանջ) է, և որոնք ներկայացրել են նշված ծանուցումը ստանալու պահանջ.

բ) որոնք ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի ստեղծման պահից հետո իրենց ավանդի հետ կապված գործարք իրականացնելու նպատակով ներկայացել են բանկ:

Սույն պարզաբանման իմաստով «բանկային ավանդ» հասկացությունը համապատասխանում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սահմանմանը:

Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի նախագահ

Տ.Սարգսյան

2005 թ. փետրվարի 21  
Երևան